

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — Շուշան, ողբերգութիւն Կրեք արարածով
(Թիւրքիայի հայոց կեանքից) քառածալ 112 էջ Պետերբուրգ,
գինն է 1 ռուբլի:

Պր. Ատրպետեան ալն հալ-կաթովիկ երիտասարդներից մէկն է, որոնք իրանց դրական աշխարհայեցողութեամբ և գովելի ձգտումներով ներկայացնում են իսկական հալ-կաթովիկների հակապատկերը: Մինչդեռ վերջիններս դաւանական կեանքից դուրս ոչինչ ըմբռնել չեն ուզում, առաջինները, անուշադիր թողնելով դաւանական սահմանները, ձգտում են գործելու փանուշ ընդհանուր ազգի: Սա շատ ուրախալի երևութ է:

Միւս կողմից Շուշանի հեղինակը ալն երիտասարդ-գրողներից մէկն է, որոնք առանց որոշելու թէ իրանց ընդունակութիւնները կամ ձիրքը մարդկային գործունէութեան որ տեսակին համեմատ են և թէ մասնաւորապէս նոցա գրիչը գրականութեան որ ճիւղին է համապատասխան, չեն գնում իրանց իսկական կոչման ուղութեամբ, այլ փչացնում են արծաթեալ ժամերը «բանաստեղծական»

գրածքների վերալ «Շուշանը» առհասարակ բանաստեղծական գործ համարել չէ կարող: Ամենալուրջ ուշադրութեամբ կարդացելով «Շուշանը» ընթերցողի սիրտը չէ շարժում, չէ զարթեցնում նորա մէջ ոչ մի զգացմունք: Բանաստեղծը պիտի տիրապետէ ընթերցողի զգացմունքներին, խաղալ նոցա հետ, որպէս տաղանդաւոր երաժիշտը դաշնամուրի կլավիշների վերալ: Բանաստեղծը պիտի հոսեցնէ իւր սրտի կրակը ընթերցողի սրտի մէջ, մինչդեռ «Շուշանը» ալնքան սառն է, որ եթէ նորան ընթերցանելու ժամանակ ջերմաչափը տնկէք ձեր սրտի վերալ, սնդիկը ոչ մի գիծ էլ չի բարձրանալ, գուցէ դեռ մի փոքր էլ վալր կիջնէ: Բանաստեղծը պիտի արիւնով գրէ, իսկ Ատրպետեան գրել է ջրախառն թանաքով: Պարոնի աշխատութեան մէջ ոչ միայն չկան վառ, կենդանի զգացմունքներ, այլ և չկալ նուրբ ճաշակ, չկալ մու-

գլխա և գոնեա չկան երևակալութեան որ և է զեղարւեստական կերակուր ներկայացնող երևութներ, տեսարաններ, Եթէ լիչեալ զբաժքի միջից դուրս հանէք զանազան սպանութիւններ, կռիւներ և աղմուկներ, որոնք իսկական գեղարւեստ չեն կազմում, տակը շատ չնչին բան կը մնալ: Սկզբից մինչև վերջը ինչոր երիտասարդներ և օրիորդներ, ծերեր և ջահիլներ, քուրդեր և հայեր, պաշտօնականներ և գիւղացիներ չափնուում են բնմի վերայ, խօսակցում են որքան հեղինակի սիրտը ուզում է և դուրս գնում: Իսկ սոցա ամբողջ խօսակցութիւնը բաղկացած է սառն դատողութիւններից և բացականշութիւններից, որոնք գուցէ կարողանան որ և է նիւթ տալ ընթերցողի մտքին, բայց նորա զգացմունքի, սրտի վերալ աղբեցութիւն ունենալ չեն կարողանում:

Մեր խօսքը հաստատելու համար պիտի օրինակներ բերենք, բայց նախ և առաջ հարկաւոր ենք տեսնում ծանօթացնել ընթերցողին զբաժքի բովանդակութեան հետ:

Ոմն քուրդ ցեղապետ Փոլադ-բէկ սիրահարած է հալ աղջիկ Շուշանի վերալ և որոշում է փախցնել նորան: Իսկ Շուշանը և Միհրանը (գիւղականներ) սիրում են միմեանց: Սրբ մի օր աղջիկը իւր ընկերուհիների հետ գտնւում էր գիւղի մօտի ձորակում, գալիս է Միհրանը և չափնում է թէ ամին (Շուշանի հալը Սուրէնը) «խօսք է տալ տէր հօրն, որ Շուշանին հարս տալ իսպերենց տուն»: Շուշանը տրտմում է, բայց հաւատացնում է Միհրանին, որ

ինքը ուրիշին չի գնալ: Միհրանն էլ աւելացնում է, թէ քանի որ ինքը կենդանի է, թող չի տալ ոչ ոքի Շուշանին մօտեմալ: Այդ միջոցին Շուշանի ընկերուհիներ Սելւին և Չինարին օձ են տեսնում և վախենում են (ընթերցողի ուշադրութիւնն ենք խնդրում), իսկ նոքա պատասխանում են, թէ արդէն անցաւ վախը: Ապա Սելւին և Չինարին հեռանում են, որ սիրահարւածները մենակ մնան: Վերջիններս սկսում են նորից միմեանց սէրը ապացուցանել: Յանկարծ Սելւին և Չինարին գալիս են և չափնում են թէ ամին դալիս է: Ուստի Շուշանը ուշաթափ լինելով ընկնում է Միհրանի գիրկը: Սուրէնը, տեսնելով Շուշանին Միհրանի գրկում, բարկանում է, բայց լնտոլ սիրահարւածների և աղջիկների խօսքերից համոզւելով ներում է և օրհնում ջահիլներին: Օրիորդները (նոյնպէս Շուշանը) մօտեմում են աղբիւրին ամանները լցնելու: Յաւնւում են քուրդերը: Գիւղից ձաւներ են գալիս, որոնցից երեւում է թէ ինչ-որ տուն է ավւում: Սուրէնը, Միհրանը և Շուշանը կամենում են օգնութեան վազել, բայց քրդերը նոցա առաջը կտրում են: Փոլադ-բէկը կամենում է Շուշանին տանել, վերջինս Միհրանից պաշտպանութիւն է խնդրում: Միհրանը սպառնում է Փոլադին, իսկ Սուրէնը խնդրում է Փոլադ-բէկը հրամայում է Սուլօին (իւր մարդկանցից մէկին) սպանել Միհրանին, և իսկույն Սուլօն գնդակահար է անում նորան: Փոլադը կամենալով, որ Միհրանը շուտ հոգին տալ, սուրը

խրում է նորա կուրծքը, Գիւղից օգնութեան են գալիս, բայց արդէն ուշ է: Գրողերը Շուշանին տանում են, Գիւղացիք սուգ են անում Միհրանի դիակի վերաւ:

Նրկրորդ արարւածքը կատարւում է ցեղապետի վրանում: Շուշանը մասամբ երազի մէջ, մասամբ զարթոն, արտալատում է իւր վիշտը: Բէկը զարթնում է և տեսնելով որ Շուշանը դեռ չի պառկել, պատւիրում է գալ ու քնել: Շուշանը չի կամենում, փռադը փորձում է համոզել նորան, որ ուրանալ ազգն ու հաւատը և սիրէ նորան: Ապա տալիս է նորան ինչ որ կողոպտած փաշայի կնոջից խլած զարդերը: Շուշանը չէ վերցնում: Փռադը լսելով ձիու խըր-խընջոցը դուրս է գնում: Բէկի մալրը և քորերը ներս մտնելով կամենում են համոզել Շուշանին, իսկ բէկի կինը հաջողում է նորան: Փռադ բէկը ներս գալով հրամարում է կանանց հեռանալ, ապա Շուշանին սպառնում է սպանել, եթէ չի կամենալ պառկել: Շուշանը դէմ է դնում կուրծքը: Փռադը սուրը դէն է գցում և կրկին աշխատում է համոզել, բայց մերժումն է ստանում: Ինչ որ Դերվիշ է լատնւում, որը հասկացւում է որպէս Միհրանի հոգին, իսկ որպէս հեղինակը մեզ անձամբ հաւատացնում էր, նա ինքը Միհրանն է, որ վերքերից բռնկւել է: Բայց Սուլտի գնդակից վալր գլորելուց և Փռադի սուրը կրծքի մէջ խրելուց չետոյ նա բռնկւել է և ալկալէս շուտ Շուշանի օգնութեանն է գալիս. ալդ անբնական է: Մանաւանդ որ գիւղացիք սուգ էլ

արին նորա դիակի վերաւ: Մեզ հաւանական է երևում, որ հեղինակը ինքն էլ պարզ չէ ըմբռնում, Դէրվիշի ով լինելը: Բայց շարունակենք: Նրբ ֓ռադը դուրս է գնում կերակուր պատրաստել տալու, Դէրվիշը խօսակցում է Շուշանի հետ, լատնելով որ նա կարող է շուտով աղատւել: Գալիս է բէկը, որին չետոյ ծառաները կանչում են, լատնելով որ թուրք ձիաւորները օբի բուրբը պատել են և Վալի փաշան ուղում է բէկին տեսնել: Բէկը դուրս է գնում: Դերվիշը կողմնակի կերպով հասկացնում է Շուշանին, թէ նա պիտի իրան հաշտւած ձևացնէ, որպէս զի կարողանալ քաղաք դնալ: Դերվիշին կանչում են և նա դուրս է գնում: Շուշանը հրաւիրում է բէկի քորերին, որ իրան զարդարեն: Բէկը և Դերվիշը խօսակցելով լատնւում են: Գալիս է ոստիկանապետը, որը կամենում է բէկին և Շուշանին քաղաք տանել դատարանին ներկալանալու համար: Սկզբում բէկը չէ համաձայնում, բայց տեսնելով Շուշանի փոխւած լինելը համոզւում է և ամենքը ճանապարհւում են դէպի քաղաք:

Նրրորդ արարւածքը կատարւում է դատարանում: Ալատեղ հայերը աշխատում են աղատել տալ Շուշանին, իսկ դատաւորները և քրդերը հակառակ ուղղութեամբ են գործում: Յաւնւում է Անշալ խանումը, որի մարդին (փաշային) Փռադը սպանել է: Շուշանը խոտտովանում է որ իրան զուով են տարել և ցոյց տալով զարդերը փաշայի կնոջ, մատնացոյց է անում Փռադի վերաւ:

Անշան ճանաչում է փռադի մէջ իւր
ամուսնու սպանողին: Եւ որովհետեւ
Պոլսից խիստ հրաման էր ստացւած
փաշայի սպանութեան գործի մասին,
ուստի անմիջապէս կախել են տա-
լիս փռադ բէկին: Քրդերը գրգռու-
ած ներս են թափուում և սպանում
են Շուշանին:

Գրւածքի բովանդակութիւնը հե-
ղինակի արդիւնաբերութիւնը չէ,
ալ ճա իսկապէս տեղի է ունեցել:
Նիւթը տեղ տեղ ներկայացնում է
աջնակիսի լարմար առիթներ որ նո-
րանցից օգտուելով իսկական բանա-
ստեղծը կարող էր շօշափելի տպա-
ւորութիւն գործել: Բայց պ. Ատրպե-
տեանի անբանաստեղծական գրիչը
չէ կարողացել օգտուել լիչեալ նպաս-
տաւոր առիթներից:

Օրինակի համար վերցնենք աջ
տեսարանը, որտեղ քրդերը խլում
են ջահիլ աղջիկը իւր սիրականի և
հօր ձեռքից:

Ք ու Ր դ եր ի խ ու մ բ

Լըսեցէք գողգոթոցին,
Միթէ հաբերը ձախն ունին....
Ճանբալ մի տաք անցնին,
Առաջներն առ չիւտէին....

Ս ու Ր է ն, Մ ի հ Ր ա ն և Շ ու շ ա ն

Ի՞նչ էք ուզում, անիրաւ,
կապել աղատ ճանապարհն....

Մ ի հ Ր ա ն

Հեռւ, մեղ մի մօտենալ,
Հեռւ, դու առաջ մի գալ....

Փ ո լ ա դ-բ է կ

Բորբոքւած է հախ
Ջարմանալի բան....
Էս էլ նոր նըշան....

Ս ու Ր է ն

Մի աղպէս խորխտալ,
Հանդարտւիր Միհրան.

Շ ու շ ա ն

Ինձ դալլի բերանն

Մի թողնիլ Միհրան,

Ո՞րքան սառն է ալբ բոլորը,
կամ վերցնենք ալն տեսարանը,
որտեղ սիրահարւածները միմեանց
առաջին անգամ հաստատ խօսք են
տալիս:

Շ ու շ ա ն

Մէկ երեստ աշիր, Միհրան,
Ախար թոքերս քըրքըրան,
Պատմիր վըշտիդ պատճառն ինձ,
Բան մի պահիլ ինձանից,
Շուշանը թող չարդ տանէ,
Թէ ցաւդ արդար չը բաժանէ:

Մ ի հ Ր ա ն

Օ՛ք, ալրում է հոգիս բոցով
Ի՞նչպէս չալտեմ ես քեզ, Շուշան:

Շ ու շ ա ն

Թող արիւնս հոսի բոլորն
Մինչև լազեցնէ էդ քու տապն,
կամ թէ փոքր լետոլ շարունա-
կում է.

Ա՛խ-եթէ դու կարենալիր
Բաց անել այս կուրծքիս տախտակն
կամ թէ աչքերդ թափանցէին
Աներևոյթ կողերիս տակն,
Անշուշտ էլ լաւ դու կը զգալիր,
Սըրտիս տրովն, հոգոյս տանջանք:

Մ ի հ Ր ա ն և Շ ու շ ա ն

Եթէ մեր ճակատներին
Միալն վիշտ է գրել բաղդն,
Մեր սըրտերի տեղն ինչի
Չէ դըրել կարծր լեռ քար:

Ո՛ւր է ալդ բոլորի մէջ սէրը,
զգացմունքը, բանաստեղծի կրակը,
Ալժմ տեսնենք թէ ինչպէս է փոխադ-
բէկը համոզել աշխատում Շուշանին,
որի վերաջ նա, ըստ հեղինակի, սի-
րահարւած է:

Փոխադ-բէկ (տեղից բարձրանալով)

Անցել է արդէն կէս գիշերն,
Բայց նա չկալ, եկել չէ դեռ...
Ախ, Ֆըլաշի լամառ աղջիկ,
Հոգիս արիւր քեզ խաղալիկ...
Արի, քնիւր, Շուշան, վեր կանց,
Քանի մէկ դու անքուն մընաս,
Թո՛ղ խաղաղի իրանդ հոգնած,
Կենդանանալ դէմքդ թոշնած...

Լըսիւր, Ֆըլաշի աղջիկ,

Մի տալ զալրացման տեղիք:

Շ ու շ ա ն

Քոնքս կտրել ես փոխադ,
Թոքերս խորովել Գողիադ.
Փ ո լ ա դ (դուրս գնալով)
Դնչի է խըրխընջում ձիւս,
Բացել խօ չէ կապերից...

Ո՛րքան թող է, որքան անհե-
տաքքիւր է:

Լինում են բեմական գրողներ,
որոնք թէն բանաստեղծական ձիրք
չունին, ալնուամենայնիւ շնորհիւ
իրանց վառ երևակալութեան և դի-
տելու ընդունակութեան կարողա-
նում են կեանքի մէջ տեղի ունեցող
երևութները ուղղամասիւրելով բեմի
համար քիչ շատ լարմարութիւն
ունեցող պիեսաներ լորինել (ոչ թէ
բանաստեղծական դրամաներ), Ցա-
ւով սրտի պիտի ասենք, որ Շուշան
ողբերգութիւնը, նոյն իսկ ալ տե-
սակի պիեսաների կարգին չէ կարելի

լատկացնել, որովհետեւ հեղինակը
լորինելու ոլժ չէ ցուց տալիս: Շու-
շանը ոչ ստեղծւած է բանաստեղծի
տաղանդով, ոչ լորինած է լուսա-
նկար-բեմագրի գրչով, ալ նա չինած
է, կազմած է արհեստական կերպով:
Մեր ասածին ապացուց է մանաւանդ
այն, որ իւրաքանչիւր քալափոխում
հանդիպում էք դուք կատարելապէս
աւելնող բառերի, ֆրազների և
ամբողջ տեսարանների, որոնք պիե-
սակի ընթացքի հետ ոչինչ կապ
չունին, ինչո՞ւ համար է օրինակ
մտքրած առաջին արարածի մէջ
հետեւալ անհամ տեսարանը, որը,
որտեղ սկսում է, ա՛նտեղ էլ վեր-
ջանում է:

Ս ե լ վ ի

Քուրիկ, օձ տեսանք,
Սաստիկ վախեցանք:

Չ ի ն ա Ր ի

Նղբալ մի մեծ իժ
Անցաւ մեր մօտից...

Շ ու շ ա ն

Մի վախիլ Սելի,
Նա անմեղներին
Նրբէք չի խալթիլ:

Մ ի Ն Ր ա ն

Շուշան մի պուտ ջուր,
Շուտ արա խմցուր:

Ս ե լ վ ի և Չ ի ն ա Ր ի

Բան չկալ եղբալր,
Անցաւ ժամանակն,
Մենք էլ մոռացանք,
Սիրտերս է խաղաղ:

Այս տեսարանը միայն նրա հա-
մար է, որ ապագայում կարելի լինի

ասել «Աստուած մեզ պահէ երրորդ փորձանքից», որովհետեւ հակառակ դէպքում փորձանքի թիւը երկու կլինէր: Ի հարկէ հեղինակը կարող էր օձի փոխարէն և մի կատու, կամ մի մոկը դուրս բերած լինել, քանի որ խնդիրը երեք թւի մէջն է միայն: Վերցնենք ուրիշ օրինակ, ինչո՞ւ համար է մէջ բերած Հասօի մտադրութիւնը Ձինարիին փախցնելու, որ երեւում է հետեւալից:

Մ ա մ օ

Ահա Հասօ լաւ առիթ
Ձեռք կը բերես Ձինարիդ

Խ ու մ բ

Տանենք վերան Ձինարին,
Որ ծառայէ քաւթաւին:
Դէ՛հ քէլֆ արա, Հասօ ջան,
Այսօր ալչու է քո ճանն,
Մամօն լինի քեզ քաւոր,
Բոլորս էլ հարսնիքաւոր:
Այս իրիկուն անպատճառ
Գրեմ, գողցիր մի ոչխար,
Սաջումն անենք զավուրմալ,
Սըխտօր, մածուն անխընալ:
Դէ՛հ քէլֆ արա Հասօ ջան,
Այսօր ալչու է քո ճանն:

Ախր ալդ բոլորը ինչ կապ ունի
Փոխադ-բէկի բումանի հետ:

Վերցնենք երրորդ օրինակ, ինչի՞
է հարկաւոր «Խապերենց տան»
խնդիրը, որ արծարծւած է հետեւա-
լում:

Մ ի հ ր ա ն

Ամին խօսք է տւել տէր հօրն,
Որ քեզ հարս տալ Խապերենց տան.

Շ ու շ ա ն

Ա՛խ, ինչ խօսք է երկնաւոր,

Խոր գերեզման դիր ինձ աղապ,
Մի թող տալ ինձ Միհրան:

Մ ի հ ր ա ն

Դու անհոգ կաց Շուշան,
Քանի որ իմ երակներում
Հոսում է տաք, կարմիր արիւն,
Երկրի վերալ ոչ մի մարդ

Ձէ կարող քեզ մօտենալ և ալչն:
Սրանով էլ վերջանում է Խապերենց
խնդիրը, ուրեմն նա ինչո՞ւ համար էր:

Ալդ բոլորից լետոյ գոնեալ հեղի-
նակին չաջողւած լինէր, որ և է
տիպ ստեղծել, սակայն ալս կողմից
նոյնպէս անբաղդ է պիտան, Շու-
շանը առանց քաշակու աղանջում
է ընկերուհիներից, որ իրան սիրա-
կանի հետ մենակ թողնեն, բաւց
փոքր լետոյ, երբ հօր մօտենալը
իմանում է, ամօթից ուշաթափ է
լինում: Այն հալ աղջիկը որ ուշա-
թափ լինելու չափ ամօթխած է, ոչ
միայն կը հեռացնէր ընկերուհիներին
սիրականին մօտ մնալու առիթով,
ալ ինքն էլ չէր մնալ, եթէ նրանք
անպատճառ կամենալին հեռանալ:
Սուրէնի մօտենալը տեսնելով Մի-
րանը ասում է.

Երկնի թագակիր,

Յաւիտեան կորանք,

Մեր ճակտից ջընջիր

Սոսկալի տանջանք:

Այս տողերից նախ կարծւում է,
որ Սուրէնը մի բռնատր և խստա-
սիրտ հալս պիտի լինի, մինչդեռ
պիտեալի ուրիշ մասերում նա մի
խեղճ, բարեսիրտ մարդ և ներողա-
միտ հալս է: Միւս կողմից միթէ
վերոյիշեալ տողերը կարող են դուրս
գալ մէկ քաջասիրտ տղամարդի բն-

բանից, որպիսին ուրիշ տեսարաններում Միհրանն է,

Փողադ-բէկը, որի ամբողջ իդէալը Շուշանին «առեանգելու» մէջն էր, ահա թէ ինչ է ասում իւր սիրույ մասին.

Հալ աղջիկն ալբոց հոգիս,
Այս սէրն կըտրեց քուն աչքիս,
Խեղդեցի հառաչանքից
Փըրկեցէք ինձ կրակից:

Խօսքեր, որոնք կարող են բղխել մի եւրոպացի ջղալին կալիւրի սրտից, ոչ թէ մի քուրդ առաջակապետից, որը առանց ալ և ալի իւր ցանկացածը դոռով կատարեց. ուրեմն էլ ինչ սէր, ինչ հառաչանք, ինչ կրակ.

Կամ որքան լատկանիշ է հալ աղջիկներին հետեւեալ երգը.

Արի, վշտահար,
Քո սրտի համար
Շուշանի կաթից
Պատրաստե՛ք դեղ ճար:

Նախ որ կոյս աղջիկը կաթ չի ունենալ, իսկ երկրորդ՝ վիշեալ խօսքերը ոչ ալեքան գեղարեւոտական են, որքան հարեմական.

«Շուշանի» արհեստական կաղմ-լածքի մի լաւ ասպցոցն էլ ալն է, որ տեսարանները շատ թույլ և շինովի կերպով են կապած իրար հետ: Օրինակ երկրորդ արարածի առաջին տեսարանի վերջում հեղինակին հարկաւոր է դալիս Փողադին հեռացնել բեմից և որովհետեւ բնական պատճառ չէ գտնում, հեղինակը ստիպում է ձիուն դուրսը խըրխընջալ, որպէս զի Փողադը դուրս գնալ ասելով:

Ինչի է խըրխընջում ձիս,
Բացեւ խօ չէ կապերից...

Ի հարկէ եթէ ձին չը խըրխընջալ, հեղինակը ուրիշ պատճառ կը գտնէր, օրինակ թէ «ինչու են շնեւր հաչում, արդեօք գոգեր չեն եկել»:

«Շուշանի» զանազան կտորներից երևում է, թէ հեղինակը կարևոր տեղեկութիւններ ունի Թուրքաց պետական կաղմակերպութեան, պետական հիմնարկութեանց և համանման բաների մասին: Նթէ համանման տեղեկութիւնները մշակելով արձակ կամ վիպասական ձևով, մտցնէր մեր գրականութեան մէջ, պ. Ատրպետեանը բաւական օգուտ կը բերէր:

Մեզ մասամբ ծանօթ են և պարոնի վիպական գրածքները: Նւ ալ դրոշմից մեր հանած եզրակացութիւնը անկեղծօրէն լատնում ենք, որ հետեւեալն է: Պր. Ատրպետեան կեանք տեսած, փորձառու, զիտող, հետազոտող անձնաւորութիւն է. նա պաշար ունի. սա անկասկած է: Նա կարողանում է դիտել, հետազոտել, ուսումնասիրել և իւր տեսած ու լսածը նկարագրել... Նա ունի մանաւանդ աչքի զարնող վիշողութիւն: Բայց երկտասարդ գրողին պակասում է անսովոր զգալնութիւնը, ստեղծող ֆանտազիան, նուրը գեղարեւոտական ճաշակը ու հոգիներին մէջ թափանցելու սրատեսութիւնը: Իսկ առանց ալ դրոշմի մէկը կարող է դառնալ լուսանկարող—վիպասան, հետազոտող գիտնական, պատմագէտ, իրաւագէտ, բայց ոչ երբէք բանաստեղծ: Մի խօսքով մենք շատ հե-

տաղտոտական արդիւնք ենք սպասում Ատրպետեանի գրչից, բալց նորանից չենք կարող սպասել նուրբ

բանաստեղծական աշխատութիւններ

Ա. Թ.

ՄԿԻՏՏԵԱՆ, 1, ևոն: «Ամուսնական խնդիրներ», մասն ա. Մոռք և զաւակունքն: Ութածալ, 14 էջ.—Պոլիս, տպ. 189 թ.:

Ամուսնութեան խնդիրը կեանքի ամենակարևոր խնդիրներից մէկն է: Քանի տարօք պիտի ամուսնանալ երիտասարդը կամ օրիորդը, ինչպէս պէտք է ընտրութիւն անել, ինչ ամուսնական և բարոյական նախապատրաստութիւն է հարկաւոր ամուսնութիւնից առաջ և ալն և ալն: Նոր կազմող ընտանիքի և սպասող մանրիկները վիճակը կախած է ան հանգամանքից, թէ ամուսնացողները որքան գիտակցաբար են մտնում նոր ասպարիղի մէջ, որքան խելացիութեամբ են դնում ընտանիքի հիմքը: Ընտանեկան կեանքի որպիսութենիցն է կախած ամբողջ հասարակութեան վիճակը: Նիկէ մի հասարակութիւն, մի ազգ, մի երկիր նախանձելի վիճակ ունի, պատճառը պէտք է որոնել նորա ընտանիքների խելացի հիմնադրութեան մէջ: Նիկէ ազգը որ և է ժամանակամիջոցում իւր դրութիւնը վատթարացնում է, սորա ամենապիտան արտադրանքներից մէկը պէտք է որոնել ընտանիքների անամութեամբ հիմնելու և շարունակելու մէջ: Իսկ եթէ մի ազգը ընտանեկան կեանքը խելացի հիմունքների վերալ է դրած, պէտք է

լուսալ որ նա ոչ միայն չի կորչի, այլ և կը կարողանալ նշանաւոր քաղեր անել, եթէ ի հարկէ չեն. թարկէ որ և է պատմական—անսովոր ձախորդութիւնների: Բալց նոն իսկ ձախորդութիւնների դէպքում ան ազգը անհամեմատ աւելի շաներ ունի լաղթող հանդիսանալու, որը լաւ է ըմբռնում ընտանիքի խելացի հիմնադրութեան նշանակութիւնը:

Ահա թէ ինչու ամուսնական խնդիրները իւրաքանչիւր փոքր ի շատէ ինքնաճանաչութիւն ունեցող ազգի մէջ ամենաեական խնդիրների շարքումն են դասուում: Ոչ մի եւրոպական գրականութիւն զուրկ չէ ամուսնական խնդիրներին վերաբերող բազմաթիւ և բազմատեսակ աշխատութիւններից: Բալց մեր գրականութիւնը տակաւին համարեա ոչինչ չունէ վիշեալ ճիւղին վերաբերեալ, թերեւ միայն Սեդրակեանի «Ամուսնական խնդիրներ» գիրքը, որը քննում է խնդիրը եկեղեցական—իւրաւարանական տեսակետից: Ուտի մենք ուրախութեամբ ողջունում ենք Մկրտչեանի «Ամուսնական խնդիրներ» վերնագրով գրքովը, որը որքան էլ աննշան լինի իւր